Ի գիտություն հասարակությանը

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը, նպատակ ունենալով տեղեկացնել հանրությանը հանձնաժողովի 2021 թվականի աշխատանքային ծրագրով 3-րդ եռամսյակում նախատեսված աշխատանքների մասին, ստորև ներկայացնում է այդ աշխատանքների հակիրճ բովանդակությունը:

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2021 թվականի աշխատանքային ծրագրով 3-րդ եռամսյակի ընթացքում նախատեսվում է՝

- Սակագներում ներառման ենթակա ներդրումների օգտակար և օգտագործվող ծավալի գնահատման, անարդյունավետ և ոչ հիմնավոր ներդրումների ծավալի բացահայտման և սպառողներին առաքվող էլեկտրական էներգիայի և բնական գազի սակագներում դրանք չներառելու նպատակով իրականացնել «Հայաստանի էլեկտրական ցանցեր», «Գազպրոմ Արմենիա», «Միջազգային էներգետիկ կորպորացիա», «Հաշվարկային կենտրոն», «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն», «Քոնթուր Գլոբալ Հիդրո Կասկադ» փակ բաժնետիրական ընկերությունների կողմից 2020 թվականին կատարված ներդրումների փաստացի ծավալների ուսումնասիրություն, արդյունքների ամփոփում:
- Էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոնների լրամշակում, որի արդյունքում կհստակեցվեն ինքնավար էներգաարտադրության շրջանակում էլեկտրական էներգիայի փոխհոսքերի հաշվառման մոտեցումները և կբարելավվեն մատակարարի և ինքնավար էներգաարտադրող հանդիսացող սպառողների կարգավորվող իրավահարաբերությունները:

  Մասնավորապես, առաջարկվող լրամշակումներից է էլեկտրական էներգիայի հաշվառման և վերահսկման ավտոմատացված համակարգում ներառված ինքնավար էներգաարտադրողների առևտրային հաշվառքի սարքի խախտման դեպքում մատակարարի կողմից էլեկտրական էներգիայի քանակի

և արժեքի վերահաշվարկման մեխանիզմի ներդրումը: Բացի այդ, ինքնավար էներգաարտադրողին հնարավորություն կտրվի տեղակայելու առևտրային հաշվառքի սարքի հարաչափերին համապատասխան վերստուգիչ հաշվառքի սարք:

- Գազամատակարարման համակարգի սակագների հաշվարկման մեթոդիկայի լրամշակում:
- «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության կողմից սպասարկման որակին վերաբերող տեղեկատվության հավաստիության ընտրանքային ուսումնասիրություն:
- Հանրային կազմակերպությունների կողմից գնումների առանձին գործարքների արդյունավերության ուսումնասիրության և գնումների կարգերի նկատմամբ սահմանված պահանջներին համապատասխանության գնահատման նպատակով՝ իրականացնել հանրային կազմակերպությունների 2020 և 2021 թվականների գնումների առանձին գործարքների ընտրանքային մոնիթորինգ, որը ներառում է հանրային կազմակերպությունների կողմից գնման գործընթացի պլանավորման կամ նախապատրաստման, գնման գործընթացի կազմակերպման, պայմանագրի կնքման և կատարման մոնիթորինգը:
- «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» ՀՀ օրենքին համապատասխան՝ մինչև սույն թվականի հոկտեմբերի 1-ը ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2022 թվականի գործունեության ծրագրի մշակում և ներկայացում ՀՀ Ազգային ժողով:
- Եռամսյակային արդյունքներով ամփոփել և հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակել՝
  - սպառողների սպասարկման որակի ցուցանիշների վերաբերյալ էլեկտրական էներգիա, բնական գազ և խմելու ջուր մատակարարող ընկերությունների կողմից ներկայացված տեղեկատվությունը,
  - սպառողների դիմում-բողոքների վերաբերյալ էլեկտրական էներգիա, բնական գազ և խմելու ջուր մատակարարող ընկերությունների կողմից ներկայացված տեղեկատվությունը,

- էլեկտրաէներգետիկական, գազամատակարարման համակարգերի և ջրային ոլորտի կարգավորվող ընկերությունների գործունեության, ինչպես նաև հեռահաղորդակցության ոլորտը բնութագրող տեխնիկատնտեսական ցուցանիշները: